



## ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

(Ծարտարապետ)

### ԳՈՇԱՎԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Գոշավանքի հիմնադրումը կապված է Բանքահոչակ առակագիր և իրավաբան Մխիթար Գոշի անվան հետ: Պատմական տվյալների համաձայն Գոշավանքը կառուցվել է 12-րդ դարի վերջում, Տաճառու կոչվող ձորում, երկրաշարժի հետևանքով ավերված Գետիկ վանքի բանդվելուց հետո:

Հնում կոչվել է Նոր-Գետիկ և միայն 1213 թվին, Մխիթար Գոշի մահից հետո, այն վերանվանվել է Գոշավանք:

Գոշավանքը հիմնականում կառուցվել է մեկ դարի ընթացքում: Նրա կազմի մեջ են մտնում չորս եկեղեցիներ, մեկ գավիթ, սեղանատոն, գրատուն-զանգակատուն, մատուռներ, շրջապատում կանգուն վիճակում և կիսավեր պահպանվել են մեծ թվով խաչքարեր:

Հուշարձանախմբի հիմնական կառուցվածքը 1196 թվին կառուցված և Աստվածածին եկեղեցին է, որի շուրջը հետագայում շարունակել են կառուցապատել մյուս հուշարձաններով: Ս. Աստվածածին եկեղեցին գմբեթավոր սրահ է ուղղանկյուն հատուկագծով: Կառուցվածքի երկայնական առանցքը (արևմտյան-արևելյան) ավարտվում է արեւիլյան արսիդայով, որի երկու կողմերում տեղադրված են երկրարկան ավանդատները:

Հարավային և արևելյան հարթ ճակատները հարստացված են եռանկյունի որմնախորշերով: Թմրուկի միակ զարդը կազմում է մեկ շարքի բարձրությամբ կատարված բանդակազարդ գոտին:

Հաջող ընտրված համաշափությունները և առանձին մասերի ենթաշնչակ լուծումը ընդգծում է կառուցվածքի մոնումենտալ կոմպոզիցիան:

Հուշարձանը կառուցված է երկաստիճան թիմնաստիճանների վրա: Հիմնաստիճանների ստացին շարքը և թմրուկի առաջին շարքը կառուցված են ատամեավոր հակասեյամիկ գոտու ձևով: Զնայած ավերիչ երկրաշարժերի ներգործությամբ, հուշարձանը շատ քիչ վերակառուցումներով և փոփոխություններով է հասել մեզ, որը վկայում է նրա կառուցումների բարձր արվեստի և շինարարական որակի մասին:

Ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգման աշխատանքների բարդությունը հիմնականում պայմանավորված են նրա տեխնիկական բարդությունը, հատկապես թմրուկի խարիզմական վիճակով:

1987 թվականի վերանորոգման ժամանակ խարիզմական թմրուկը վերաշարելու հնարավորություններ չունենալու պատճառով, մետաղյա օղակներով ժամանակավոր ամրացում էին կատարել, որոնք սակայն այնքան էլ լավ չէին ընդգրկել թմրուկը և փոքր մակերեսով հավելու պատճառով, լավ չէին աշխատում: 1956 թվականի երկրաշարժից հետո թմրուկի վիճակն այնպես վատացավ, որ արդեն անհրաժեշտ էր վերաշարել այն և իրեն ամրող հուշարձանը:

Վերանորոգման աշխատանքները սկսեցին 1959 թվականին, թմրուկի բանդրումով: Թմրուկը բանդելիս քարերը չհամարակալելու պատճառով վերաշարելու ժամանակ առաջացավ քանդակազարդ գոտու խախտում, ուստի Պետշինի հուշարձանների պահպանության վարչության պահանջով, թմրուկի այդ մասը նորից բանդվեց և վերահափակվեց: Թմրուկի հավաքման ժամանակ երեսապատերի արանքում դրվեցին երկու երկաթքետոնյա գոտիներ՝ հիմքում և պասկող քիվի ետևի մասում:

Ս. Աստվածածին եկեղեցու վերանորդման համար օգտագործվել է նոշարձանից ու նեռու ընկած նոյն քարհանքը: Աշխատանքների պրոցեսում պարզվեց, որ չնայած այդ քարը բուն նոշարձանի քարն է, սակայն շուրջ նողմնահարվող է: Այդ հարցում մեծ նշանակություն ունի նաև քարի արտահանման նաև եղանակը: Խնշանելու հայտնի է, պայթյունով արտահանված քարերի մեջ առաջանում են մազային ճարեր, որոնք հետագայում պատճառ են հանդիսանում քարերի արտահանման և քայլայման<sup>1</sup>: Քարի հանքերի խորին շերտերից արտահանված քարը պահի դիմացկուն է:

Այս հանգամանքը ստիպեց հետագա վերանորդումների ընթացքում հրաժարվել այդ քարի օգտագործումից, սկզբում միայն տանիքների ծածկասալերի, ապա նաև երեսապատման համար:

Ս. Աստվածածին եկեղեցու վերանորդումը տևեց երեք տարի՝ 1959—61 թ. Անդրադարյալ և հանդիսացավ լորջ փորձություն նոշարձանների վերանորդման աշխատանքների ընագավառում: Հուշարձանի վերանորդման վրա աշխատել են Յ. Սարգսյան և Պ. Մարարյանի բրիգադները, աշխատանքների ղեկավարը էր Վերանորդման նախագծի հեղինակ Հ. Գասպարյանը:

Վեկարի և երկրեք տանիքների տակի լիցքները կատարվել են կուժարեսունով:

Ս. Աստվածածին եկեղեցու քառայուն գավիթը կառուցված է եկեղեցու արևմտյան կողմուն: Նրա պատերին կից որմնայունների և կենտրոնում չորս հաստաթեղույս քարե սյուների վրա հենվում է կամարակապ առաստաղը իր երդիկով, ներսում ստեղծելով խորհրդավոր լուսավորություն:

Գավիթը երեք կողմից կառուցապատված է, ազատ է միայն արևմտյան ճակատը, որի հիմնական շեշտը շքամուտքն է: Օքամուտքը կրկնելով իրեն ծամանակալից հանրահայտ ձևերը (Տեղեր, Թղնայաց վանք և այլն), ունի իր յուրահատուկ կողմերը:

Մուտքի ճակատակալը կազմված է առանձին խոշոր սեպամն քարերից, որոնք ագուցված են ոչ թե վերևից մերքն, այլ մերքեվից վերև՝ ստեղծելով ամեն բուքե քանդվելու տպավորություն: Այդ տպավորությունը շեշտվում է քարերը տարրեր գույներից հավաքված լինելու հանգամանքով:

Գավիթը անհիշելի ժամանակներում վերանորդվել է, տանիքի վրա բարձրացրել

և փողի են նոյնի հաստ շերտ (տեղ-տեղ մինչև 80 սմ) իր տանիքի կաթոցը կորելու նպատակով: Հոյի այդ զանգվածը ավելացրելով էր գավիթի կոնստրուկցիաների համար և աղավաղում էր նրա ընդհանուր տեսքը: Խոշած վերանորդման ժամանակ քանդել էին եղինիկի արտաքին քիվը և քարձրացրել ևս մեկ շարքով: Հուշարձանի կյանքի հարաբեկությունը շահերը պահանջում էին ազատությունը պահպանությունից:

Հոյի շերտը վերացնելով հետո պարզվեց, որ տանիքի սպեկտրը իրագործված էին սպիտակավուն, Հաղարձնի վանքի մոտից քերպած քարից, որոնց քառորդները ջարդված լինելու պատճառով համարյա լրիվ պիտանի չեն հետագա օգտագործման համար: Բացի տանիքի անմիջաբար վիճակից, խիստ հողմանահարված էին ճակատները պառկղությունը և մասամբ արևմտյան ու հարավային ճակատների երեսապատերը: Բացակայում էին շրմորդանները և այդ տեղերում թե՛ երեսապատման քարերի և թե՛ շաղախի վրա զգացվում էր շրի քայլային ազդեցության հետքը (Նկ. 1):

Քիվերը և երեսապատերը վերանորոգվեցին նոյն քարով: Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, գերադասվեց տանիքը իրագործել տեղական տուփով, որս հիմնականում քերվում էր Արտվածի շրջանի Մայակովսկու գրուի քարհանքից: Շեղն պահպանվել եղինիկի ծածկի սպեկտրը դրանք պատրաստվեցին Կեչառիսի գավիթի ծածկի հմանությամբ: Այս հուշարձանում մերժվեց կուժաքետունի օգտագործումը, և կիրավուց պեմզաքետուն, որը հարմար էր թե՛ տեղափոխման և թե՛ տնտեսական տեսակետից (Նկ. 2):

Աշխատանքները ղեկավարում էր ճարտարապետ Վ. Խաչատրյանը:

**Ս. Լուսավորիչ եկեղեցին** գավիթի հարավային պատից անշատվում է մի նոյն ճնշոքով: Դա միանենք բազիլիկաների տիպի փոքր կառուցվածքը է, որը ուրույն տեղ է գրավում հուշարձանախմբի կառուցվածքների մեջ: Թե՛ արտաքին կամարաշարը, թե՛ ներսի հարդարանքը իրենց ոճական առանձնահատկություններով պատկանում են 13-րդ դարին: Ճակատները մշակված են կամարաշարով և հարուստ քանդակազարդ քարերով: Սուանձնահատուկ է արևմտյան ճակատը, ուր ճոխ մշակված շքամուտքի երկու կողքերին տեղադրված են եղել վարպետ Պողոսի ձեռքով 1291 թ. Կերտված երկու «ասեղնագործ» խաչքարեր:


Խաչքարերից մեկը (կոտրվածը) 1935 թվականին տեղափոխվել է Երևան և պահ-

<sup>1</sup> Г. П. Далян, Долговечность гранитов Армении в облицовке сооружений, Автографат, стр. 25 и 33.

Առաջ է Պետական թանգարանում<sup>2</sup>, իսկ մյուս՝ կանգունը, տեղում է:

1939 թվականի վերանորոգման ժամանակ ամրացվել են հուշարձանի պատերը և պղմինդրով ծածկվել է երկթեր տաճիքը: Աղյուսականության սալերը ամրացվել են շաղախով:

սակայն զիջում է նրան իր չափերով: Աբստեղ եռանկյունի խորշերը տեղադրված են երեք ճակատների վրա և որոշ չափով աշխատացնում են նրանց: Հուշարձանը վերանորոգվել է 1989 թվականին: Վերաշարվել են ճակատների վերին մասերը, պակասող



Նկ. 1. Գավիթը և եկեղեցին վերանորոգումից առաջ

Վերանորոգվեց արևմտյան ճակատի պասկոյ քիվը: Հողմանարված պատերը ներարկվեցին ոչ թանձր կազմություն ունեցող շաղախով: Տանիքները ծածկվեցին տեղական տուֆի սալերով, որովհետև պահպանված չէր սալերի սկզբանական ձևը: Վերանորոգման ժամանակ ընդօրինակվեց գավթի վրա իրագործված ծածկասալերի իրավագործությունը:

**Ս. Գրիգոր Եկեղեցին** տեղադրված է Աստվածածին եկեղեցոց հարավ: Հատակագծային լուծումով այս հուշարձանը համարյա և Աստվածածին եկեղեցու կրկնությունն է,

բարերը լրացվելով նոր քարով, տանիքները ծածկվել են կղմինդրով՝ փայտյա ճաղածածիկի վրա: Սակայն 1955 թվականին երր չափագրում էր այդ հուշարձանախումբը, փայտյա ճաղածածկը արդեն փոխվել էր, հուշարձանը փաստորեն զրկվել էր տանիքից և դանդաղ քայլապնում էր:

Թմրուկը այնպես էր քանուել, որ նրա պատի վերնի եզրը ճակտոններից ցածր էր, ուստի վերանորոգման ժամանակ երեք շաբթ բարձրացվեց: Տանիքները ծածկվեցին տեղական տուֆի սալերով. ընտրվեց իրար վրա ագուցվող սալերի ձևը:

Հուշարձանի հարավային ճառում, ճամապարհի եզրին, կառուցվել էր քարե թենապատ, սակայն ժամանակի ընթացքում այն քայլապնում և գետնի սողքի թեռևանքով ամբողջ հուշարձանի կայունությունը վտանգի տակ էր դրել: Ուստի այդ մասում նախա-

<sup>2</sup> Ս. Բարխուդարյան, Միջնադարյան նայ ճարտարապետները և քարործ վարպետները, Երևան, 1963, էջ 146; Ի. Բ. Էլլարյան, Աղասի Բոլտի հուշարձանները, Երևան, 1968, էջ 61:

տեսվում էր վերականգնել հենապատը՝ իդի սողը կանխելու և հուշարձանի հիմքերի անհափությունը ապահովելու համար: Վերանորոգման հայագիծը կազմել է տողերին հեղինակը իր և ճարտարապետ Շ. Ազատյանի չափագրության հիման վրա:

Գավթի հյուսիսային կողմում կառուցված է թաղակա սրանը, որը կարծես գալիքը միացնում է երկու այլ հուշարձաններին՝ գրասուն-զանգակառանը և սեղանատառը:

Սեղանատառը, որին որոշ հեղինակներ անվանում են ժամատուն, կառուցված է խոշոր, ամսուշ, դեղնավուն տեղական քարից: Շարվածքի մեջ օգտագործված են անկորկմանի միջոցներ՝ ուղղաձիգ դրված քարեր, որոնք պատին հաղորդում են կիկլոպական ամրոցներին հասուն տեսք, բայց շարված են կրաշաղախով: Կառուցվածքը ունեցել է փայտյա տանիք, որը չի պահպանվել: Այժմ ավելի վիճակում է: Կանգուն մնացել են պատերը:

Գրասուն-զանգակառատունը գտնվում է պեղանատան արևելյան մասում, որը կառուցվել է մի քանի շինարարական ժամանակաշրջաններում և իր ճակատների վրա պարզ կրում է ամեն մի ժամանակաշրջանի կմիջը:

Սուաշին հարկը գրաղեցնում է գրասունը: «Պատի հարթությունից դորս եկող, սրբատաշ քարից հետաքայում կառուցված, չորս զույգ որմնամույթերի վրա հանգչում է խաչվող կամարներից կազմված առաստաղը, որը ժամանակին կենտրոնում ունեցել է երդիկ: Վերջինս զանգակառան կառուցման ժամանակ փակվել է:»

Այդ կառուցվածքում ուշագրավ են չորս անկյունների քառակուսի կիսամութ խորշերը, որոնց առաստաղները իրագործված են հայկական շաբաթի օրենակով: Ներսի լուսավորվածությունը խիստ պակաս է, հավանաբար շինությունը օգտագործվել է միայն որպես գրապահոց:

Ճակատները կից սեղանատան շարվածքի շարունակությունն են և հավանաբար միասին են կառուցված: Գրասուն վրա բարձրացված է զանգակառատունը խաչական հատուկագծով, որը ավարտվում է սյունաշարի վրա կառուցված զմբեթավոր շենքով: Զանգակառատունը կառուցվել է սրբատաշ քարերով և կրում է երկու շինարարական ժամանակաշրջանի հետքեր:

Ա. Լ. Յակոբսոնը «Օչերк истории зодчества Армении V—XVII вв.» աշխատությունում Գոշավանքի զանգակառատունը 1291 թվականի կառուցված չի համարում, գըտնում է, որ այն հետագայում ստեղծված երկրարկանի եկեղեցի-դամբարանների (Եղ-

վարո, Ամաղու-Նորավանք, Կապտսան) նախատիպն է:

Ն. Մ. Տուկարսկին իր «Արհետեկտուրա Արմենի IV—XIV ամ» գրքում Յակոբսոնի այդ միտքը լինել չի բաժանում, սակայն հավանական է համարում Գոշավանքի սկզբունքի հետագա հիշված կառուցվածքներում:

Միանգամայն ճիշտ է եղրակացնում Ն. Մ. Տուկարսկին, որ այդ կառուցվածքը զանգակառուն է, և այդ ապացուցելու համար օրինակ է քերում Հաղպատի զանգակառատունը, որ արևելյան մասում արմիդայի կողարձն տեղադրված են զույգ ավանդաւուներ:

Երկաթքետունյա ամուր օղակը, որ տեղադրվեց առաջին և եղիորդը հարկերի միացման տեղում, որ առաջացել է եր քալական վագանգավոր մեղք, ամրացրեց հուշարձանի երկրորդ հարկի հիմքը: Կոպիտ տաշված քարով կառուցված առաջին հարկը մասամբ մերարկվեց շաղախով, իսկ պակասող մասերում պատերը լրացվեցին քարով: Նշենք, որ այդ պատերի որմնանցքի մեջ հնուց արդեն կային տանիքի սալերի մնացորդները, որոնք, հավանական է, վերանորոգման արդյունք են հանդիսանում:

Հուշարձանի խաչեների ճակտոնների տանիքները բոլորովին բացակայում են, ուստի կառուցվեցին երկաթքետունյա սալեր, որոնց վրա շարվեցին արթիկուֆի ծածկապերը:

Այս հուշարձանի վերանորոգման աշխատանքներում հուշարձանախմբում առաջին անգամ կիրավունք երկաթքետունյա երկենք սալի կառուցումը, որը տվեց բավականին դրական արդյունք՝ խճանվեց մեծ քանակությամբ շաղախի ու պենզա և հուշարձանը ազատվեց ծանր բեռը կրելուց:

Ա. Գևորգ Եկեղեցին գտնվում է հուշարձանախմբից հարավ-արևմտուք մի առաջին բլրի վրա: Նրա կառուցման արձանագրությունը գրված է թմրուկի վրա, որը պարզ և փոքր լինելու պատճառով բերում ենք ստորև:

**«Գ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԽԱՉԱ-  
ՏՈՒՐ ՎԱՐԵՏԻՆ ԵՒ ԲԱՐՍԵՂԻՆ ՇԻՆՈ-  
ՂԱՑ  
ԵԿԵՂԵՑԻՌԵՍ ԵՒ ԱՄԵՆՍԱՅՆ ԱՇԽԱ-  
ՏՈՂԱՑՆ  
ԱՄԵՆ»:**

**24—կառուցման ստուգ թիվը է՝ 1254:**

Հ. Մ. Տուկարսկի, «Արհետեկտուրա Արմենի IV—XIV ամ», Երևան, 1961, սր. 327.

Իր համաշափություններով և գուսապ լուծոված ճակատների շնորհիվ, որում տեղ է դրավում փոքր կառուցվածքների մեջ: Չունենալով ավանդական ճակտոններ, հուշար-

պանված սալերը վերաշարվեցին:

Արևելյան արսիդան տեղավորելու նպատակով այս հուշարձանի թմրուկը մի փոքր տեղաշարժված է դեպի արևմուտք: Հուշար-



Նկ. 2. Գավիթը և եկեղեցին վերանորոգումից հետո

ձանն ունի համարյա քառակուսի հատակագիծ, և ծածկված է քառաթեք տանիքով, որի միջից քարձրանում է կլոր թմրուկը:

1957 թվականին սկսվեցին այդ գողոտրիկ հուշարձանի վերանորոգման աշխատանքները: Հուշարձանի արևելյան պատը կառուցված լինելով թույլ ասպառներից կազմված հիմնառակի վրա և քավական ուժեղ թերության վրա, նեթարկվել էր սովոր և վտանգվել էր կառուցվածքի կայտնությունը: Թմրուկը խիստ խարիզմած վիճակում էր:

Վերանորոգման աշխատանքների ներացրում ամրացվեցին արևելյան պատի հիմքերը, շաղախի ենթարկման և բետոնապատման միջոցով: Ապա վերաշարվեցին ճակատների երեսապատերը, որ առաջացավ 3—5 մ խզվածք երեսապատի միջև: Թմրուկը գմբեթի հետ միասին քանդվեց և լինվ վերաշարվեց: Վեղարի ծածկի տակ կատարվեց կուժաբեռողներ լիցք, որի վրա իրագործվեց տանիքը՝ տեղական տուֆի սալերով: Տանիքի ցածր մասերի լամշերը ծածկվեցին քաղալույա սալերով, իսկ պահ-

ձանը չունի գմբեթային քառակուսիներ, որը բխում է հրա ծածկի կառուցողական առանձնահատկությունից:

Մարմաշենի փոքր եկեղեցին նույնպես զուրկ է գմբեթային քառակուսիներից, աւակայն հրա ծածկի ձևը բոլորովին այլ է, այնուղի այդ ստացվել է թմրուկը համարարար մեծ տրամագիծ ունենալու պատճառով:

Քննի ս. Սարգսի եկեղեցու վերանորոգման նախագիծը կազմելիս նույնպես հանդիպեցինք նման դեպքի, սակայն գծագրերի վրա որոշ համեմատությունները կատարելուց հետո, ճարտարապետ Ը. Ազատյացի հետ եկանք այն եզրակացության, որ թումբերը անհրաժեշտ են: Գմբեթակիր կամարներով կազմված քառակուսուց ութանկյունի թմրուկի հիմքին անցնելիս առաջանում են փոքր եռանկյունի դուրս ցցված մասեր, այսպես կոչված գմբեթային քառակուսիներ, որոնք անհրաժեշտ են վերցնել ծածկի տակ: (Նկ. 3):

Ս. Գևորգ եկեղեցուց արևմուտք, ըլրի գագաթին, տեղադրված է մի փոքր մատու,

որը նամարվում է Մխիթար Գոշի դամբարանը: Այդ մատուռը արևմտյան մասում ունի գալուքանման կառուցվածք, որից հազիվ ճշմարելի հետքեր են միայն պահպանվել:

շարձանից մինչև մատուռը բարձրանալու համար և, վերջապես, կանգնեցվեց քարե կողող Մխիթար Գոշի հիշատակին: Բարեկարգման աշխատանքների նախագիծը



Նկ. 8. Ս. Գևորգ եկեղեցին Բյուսիս-արևմուտքից,  
վերանորոգումից հետո

1958 թվականին այդ մատուռը և կից գալիքը մաքրվեցին Բողակույսերից և ուշ ժամանակների հավելված կառուցմերից: Կառուցվեցին աստիճաններ և Գևորգ Բու-

կազմել էր ճարտարապետ Կ. Ղաֆադարյանը:

Այսպիսով լրիվ վերանորոգվեց միջնադարյան այդ ճշանավոր համակառույցը:

